ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻՆ, ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄՅՈՒՍ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ

Մոսկվա

Խոր հուզումով տեղեկացանք Ձեր հացադուլի հայտարարության մասին, իբրև հուսահատ բողոք ընդդեմ մինչև երկինք աղաղակող անարդարությունների, ողբերգական կացությունների, որոնց ենթարկված է Լեռնային Ղարաբաղի ողջ հայ ազգաբնակչությունը, մանավանդ վերջին ամիսներին, որոնց միակ մեղքն այն է, որ կամենում են ազատ շնչել:

Մենք հայրական վշտի և բողոքի Մեր ձայնն ենք բարձրացնում համայն մեր ժողովրդի հետ միատեղ և ողբում ենք դառը ճակատագիրը ղարաբաղցի մեր հավատացյալ զավակների ու հոգևին խոնարհվում ենք Ձեր հերոսական արարքի առաջ, որ արտահայտում է ողջ հայ ազգի խղճի սրբազան աղաղակը:

Մեր հայրապետական պարտքն ենք համարում այսօր իսկ Սուրբ Էջմիածնից Մեր աղերսը հղելու Խորհրդային Միության Պրեզիդենտին՝ կոչ անելով նրա մարդասիրական և արդարության զգացումներին:

Ձեր այս տառապանքի պահերին լսեցեք ձայնը Հիսուսի. «Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»:

Ընդունեցեք Մեր սրտակցությունը, Մեր քաջալերանքը, Մեր օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 սեպտեմբեր 1990 թ.